

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Մոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում անընդհատ կատարելագործվում են ժողովրդական տնտեսության ղեկավարման ձևերն ու մեթոդները: Երկրի առանձին շրջանների կոմպլեքսային զարգացման և մասնագիտացման ու կոոպերացման, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման ու կապիտալ ներդրումների էֆեկտիվ օգտագործման հիման վրա էլ ավելի է մեծանում առանձին ռեսպուբլիկաների ու տնտեսական շրջանների դերը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման գործում:

Ժողովրդական տնտեսության պլանավորման պրակտիկայի կատարելագործման և միջըր-բանային տնտեսական նպատակահարմար կապեր հաստատելու գործում առաջնակարգ նշանակու-թյուն ունեն հասարակական արդյունքի արտադրության, բաշխման ու օգտագործման բալանսները և հատկապես հասարակական արդյունքի կարևոր բաղկացուցիչ մասի՝ ազգային եկամտի բալանսը:

Միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի բալանսի հարցերին էլ նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ հրավիրված ՍՍՌԿ Գիտա-հետազոտական կազմակերպությունների, Բուհերի, պլանային, վիճակագրական և ֆինան-սական օրգանների աշխատողների գիտական կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1961 թվականի հոկտեմբերի 9—12-ը Երևանում:

Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի գիրեկտոր Ա. Առաքելյանի բացման խոսքից հետո գիտական կոնֆերանսի պլենար նիստում հասարակական արդյունքի և ազգային եկամտի պրոբլեմները միութենական ռեսպուբլիկաներում թեմայով զեկուցում կարգաց ՍՍՌԿ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի գիրեկտորի տեղակալ Դ. Ա. Ալանվերդյանը:

Զեկուցողը նշեց, որ միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի մեծության հաշ-վարկումը, ինչպես նաև պետական բյուջեի միջոցով նրանց միջև հաստատվող տնտեսապես հիմ-նավորված ֆինանսական կապերի վերլուծությունը առաջնակարգ նշանակություն է ստանում: Ցույց տալով, որ ՍՍՌԿ մասշտաբով որոշվում է հասարակական ամբողջական արդյունքի և ազ-գային եկամտի ծավալը, Դ. Ա. Ալանվերդյանը նշեց, որ միութենական ռեսպուբլիկաներում ազգա-յին եկամտի ծավալը որոշելու հարցում ղեկավարություններ կան: Բացակայում է միասնական մեթոդոլոգիան ազգային եկամտի մեծությունը ըստ արտադրության տեղի, տեղիտորիալ կտրված-րի, պլանային զնադոյացման և ֆինանսական սխտեմի միջոցով նրա բաշխման ու վերաբաշխ-ման, բնաձևով ու արժեքային տեսակետից ազգային եկամտի շարժման ճիշտ համամասնություն-ների սահմանման և այլ հարցերի վերաբերյալ:

Ցույց տալով, որ միութենական ռեսպուբլիկաներում ստեղծված ազգային եկամտի հաշվարկ-ման զխավոր ղեկավարությունը կապված է շրջանառության հարկի զանձնման պրոբլեմի հետ, զե-կուցողը հանգամանորեն բացատրեց ՍՍՌԿ Պետպլանի և ՍՍՌԿ ԿՎՎ-ի միութենական ռեսպուբլի-կաներում ազգային եկամտի մեծությունը որոշելու մեթոդների թերությունները: ՍՍՌԿ ԿՎՎ-ն կենտրոնացված կարգով շրջանառության հարկը համամասնորեն բաշխում է ըստ միութենական ռեսպուբլիկաներում արտադրված արտադրանքի (ըստ որում այն զներով, որոնցով իրացվում է շրջանառության հարկը), որը տվյալ ռեսպուբլիկայի տեղիտորիայում փաստորեն ստեղծված զուտ եկամտի մեծությունը ցույց տալ չի կարող: Եթե շրջանառության հարկը հաշվարկվի ըստ տվյալ ռեսպուբլիկայի տեղիտորիայում իրացված ապրանքների քանակի, նույնպես ճիշտ պատկեր չի ստացվի, քանի որ դրսից ներմուծված և իրացված ապրանքները տվյալ ռեսպուբլիկայում չեն կարող գիտվել ազգային եկամտի ստեղծման աղբյուր:

Ազգային եկամտի մեծությունը միութենական ռեսպուբլիկաներում ճիշտ կերպով հաշվելու համար պետք է որոշել ամբողջ ստեղծված նոր արժեքի այն մասը, որը գոյություն ունի հավելյալ արդյունքի մեջ: Այդ մեծությունը որոշելու ղեկավարությունը կապված է գործող զնադոյացման սխտեմի հետ:

Գ. Ա. Ալահվերդյանը գտնում է, որ շրջանառության հարկի մեծությունը պետք է որոշվի ուղղակի հաշվման միջոցով: Իսկ այդպիսի հնարավորություն աստիճանաբար կստեղծվի զենքերի կարգավորմանը համապատասխան:

ՍՍՌՄ Ֆինանսների մինիստրության Ֆինանսների գիտա-հետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Ա. Սիտարյանը «Ազգային եկամտի վերաբաշխումը միութենական ռեսպուբլիկաների միջև թեմայով զեկուցեց, որ միութենական ռեսպուբլիկաների ազգային եկամտի տին հատուկ են ամբողջ ժողովրդական տնտեսության ազգային եկամտի շարժման ստադիաները՝ արտադրությունը, բաշխումը և օգտագործումը: Սակայն, եթե ամբողջ երկրի մասշտաբով բաշխված և օգտագործված ազգային եկամտի մեծությունները հավասար են, ապա միութենական ռեսպուբլիկաներում նրանք հավասար չեն: Ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման հիման վրա միութենական ռեսպուբլիկաներում ընդլայնված վերարտադրության անհրաժեշտ տեմպերն ու համամասնություններն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում վերաբաշխել ազգային եկամուտը նրանց միջև: Ռեսպուբլիկաներում իրացված ազգային եկամտի մի մասը հասարակական վերարտադրության ժամանակ տարբեր ուղիներով մտնում է հասարակական ֆոնդերի մեջ և օգտագործվում է համապետական նպատակների համար: Մյուս կողմից, հասարակական ֆոնդերի մի մասը ծախսվում է միութենական ռեսպուբլիկաներում, ինչպես դրամական, այնպես էլ նյութական ձևով վերահիշյալ հարաբերություններն էլ կազմում են միութենական ռեսպուբլիկաների միջև ազգային եկամտի վերաբաշխման պրոցեսի բովանդակությունը: Զեկուցողը նշում է, որ ընդհանուր միութենական ֆոնդերի վերաբաշխման և առանձին ռեսպուբլիկաների մասնակցության չափը նրանց մեջ որոշելու ժամանակ առաջին հերթին պետք է նշել համապետական շահերից: Այնուհետև, միութենական ֆոնդերի և միութենական ռեսպուբլիկաների ֆինանսների սխեմայի փոխհարաբերությունների վերլուծության համար նպատակահարմար է համարվում համապատասխան բալանսների կազմումը: Ս. Ա. Սիտարյանը նշում է, որ զնադոյացման սխեմայի պատճառով ազգային եկամտի արժեքային մասսայի և նրան համապատասխան ապրանքային մասսայի միջև համապատասխանություն չկա: Այդ պատճառով էլ միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի արտադրության ու սպառման փոխհարաբերությունները բնորոշող ցուցանիշներ պետք է մշակվեն: Վերջում զեկուցողը կանգ առավ միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի շարժումը բնութագրելու համար բնակչության միջոցների տեղիտորիալ տեղաշարժերի բալանսներ կազմելու անհրաժեշտության հարցի վրա:

Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ռ. Գ. Լյաբզեզովի զեկուցումը նվիրված էր միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի և ֆինանսական բալանսի հարցերին: Խոսելով ֆինանսական բալանսի նշանակության մասին, որպես ժողովրդատնտեսական պլանների համամասնության վերահսկողության միջոցի, զեկուցողը ցույց է տալիս, որ նա բազա հանդիսանալով պետական բյուջեի և ֆինանսա-վարկային սխեմայի մյուս օղակների պլանների մշակման համար՝ միաժամանակ չի կարող փոխարինել պետական բյուջեին և մյուս օպերատիվ պլաններին: Միութենական ռեսպուբլիկաներում ֆինանսական բալանսները ցույց կտան այդ ռեսպուբլիկայի ազգային եկամտի ֆինանսական սխեմայի միջոցով կուտակվող ու վերաբաշխվող մասի ծավալը: Միութենական ռեսպուբլիկաների ֆինանսական բալանսի կազմումը կհնչտացնի ֆինանսական հարաբերությունների պարզաբանումը: Զեկուցողի կարծիքով ռեսպուբլիկաների ֆինանսական հարաբերություններն ավելի լայնորեն արտահայտվում են տեղիտորիալ բալանսներում:

Այնուհետև զեկուցողն այն միտքն է հայտնում, որ միութենական ռեսպուբլիկայի ֆինանսական բալանսում շրջանառության հարկը պետք է արտացոլվի ըստ մուտքի տեղի: Այդ պատճառով էլ անկախ ազգային եկամտի հաշվարկման մեթոդից ամփոփ ֆինանսական պլանում եկամուտները կարող են արտացոլվել միայն ըստ իրենց ստացման տեղի:

Միութենական ռեսպուբլիկաների ազգային եկամտի արտադրության ծավալը որոշելու մեթոդաբանական և մեթոդական հարցերը թեմայով զեկուցում կարգաց Ուզբեկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Ա. Օսմինինը:

Քննադատելով միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի որոշման ՍՍՌՄ Պետպլանի և ԿՎՎ-ի մեթոդը՝ զեկուցողը նշեց, որ ազգային եկամտի ծավալը որոշելու ամենաճիշտ մեթոդը ռեսպուբլիկայում հասարակական անհրաժեշտ աշխատաժամանակի մեծության որոշումն է: Սակայն այն կարող է որոշվել ազգային եկամուտը արժեքին մոտ գնելով հաշվարկելու միջոցով: Եթե ՍՍՌՄ մասշտաբով հայտնի է հավելյալ արդյունքի և բնակչության սկզբնական եկամուտների հարաբերության գործակիցը, ապա հնարավոր է որոշել հավելյալ արդյունքի հասարակական նորման: Քանի որ ՍՍՌՄ մասշտաբով արտադրված և իրացված ազգային եկամտի

մեծությունը համընկնում է, ապա հնարավոր է որոշել ազգային եկամտի և հասարակական անհրաժեշտ աշխատանքի հարաբերության գործակիցը: Սակայն հավելյալ արդյունքի նորման միութենական ռեսպուբլիկայում օգտագործելու ժամանակ պետք է հաշվի առնել աշխատանքի արտադրողականության մակարդակի տարբերությունը, որը բարձր կլինի այն ռեսպուբլիկաներում, որտեղ աշխատանքի արտադրողականությունը բարձր է և ընդհանրապես: Հավելյալ արդյունքի միասնական հասարակական նորման միութենական ռեսպուբլիկաներում օգտագործելու համար պետք է հաշվի առնել աշխատանքի արտադրողականության մակարդակների տարբերությունը և համապատասխան փոփոխություններ՝ մտցնել անհրաժեշտ և հավելյալ արդյունքի հարաբերակցության գործակցի մեջ:

Հայկական ՍՍՌ արդյունաբերության զուտ արդյունքը թեմայով զեկուցում կարգաց 3. 3. Մախոնսյանը (Հայկական ՍՍՌ ԿՎՎ): Խոսելով Հայկական ՍՍՌ արդյունաբերության բուռն տեմպերով զարգանալու մասին՝ զեկուցողը փաստական տվյալներով ցույց տվեց ռեսպուբլիկայի հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի ստեղծման գործում արդյունաբերության առաջատար դերը: Ռեսպուբլիկայի հասարակական ամբողջական արդյունքի մոտ 2/3-ը և ազգային եկամտի կեսից ավելին ստեղծվում է արդյունաբերության մեջ: Գնալով ավելանում է ռեսպուբլիկայի ծանր արդյունաբերության ճյուղերի բաժինը արդյունաբերության զուտ արտադրանքի մեջ: 1958 թվականի համեմատ, 1960 թվականին ռեսպուբլիկայի արդյունաբերության զուտ եկամուտը (առանց շրջանառության հարկի) ավելացել է 26,6 տոկոսով, որը հիմնականում տեղի է ունեցել աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին: Զեկուցողի կարծիքով ազգային եկամտի հաշվարկման ՍՍՌԿՎ-ի մեթոդը հիմնականում ճիշտ է արտացոլում զուտ եկամտի ծավալն ու շարժումը տեղիտեղիքով: Սակայն այդ մեթոդը թերություններ ունի, որը զլխավորապես կապված է գնագոյացման սխառմի հետ: Նյութական արտադրության մի շարք ճյուղերի արտադրանքի արժեքի մի մասն իրացվում է ոչ թե այդ ճյուղերի արտադրանքի զենքում, այլ ժողովրդական սպառման առարկաների զենքի միջոցով, մասնավորապես շրջանառության հարկի ձևով: Արդյունաբերության առանձին ճյուղերում ստեղծված զուտ արտադրանքի մի մասն իրացվում է արդյունաբերության մյուս ճյուղերի արտադրանքի մեջ՝ դրա համար էլ առանձին ճյուղերում ստեղծված զուտ արտադրանքի բաժինը դժվար է որոշել:

Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ա. Ի. Բաղդյանը Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության զուտ արդյունքը թեմայով զեկուցման մեջ նշեց, որ գյուղատնտեսության համախառն արդյունքի մեջ համարյա կրկնակի հաշվարկ չի կատարվում: ՍՍՌԿՎ-ն հասարակական ամբողջական արդյունքը հաշվարկելու ժամանակ օգտագործում են գյուղատնտեսական արտադրանքի փաստացի զենքը: Զեկուցողը թվական տվյալներով հաստատեց, որ Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության զուտ արտադրանքն ստեղծվում է հիմնականում խաղողագործության, մրգերի, տեխնիկական կուլտուրաների արտադրության և անասնապահության մեջ: Գյուղատնտեսության մեջ ազգային եկամտի մեծ մասն ստեղծվում է կոյտնտեսություններում և կոյտնտեսականների օժանդակ տնտեսություններում, սովխոզների բաժինը արտադրվող ազգային եկամտի մեջ ղեռնա փոքր է: Սակայն մեծ է կոյտնտեսականների օժանդակ տնտեսություններում ստեղծված ազգային եկամտի բաժինը: Խոսելով զենքի մասին՝ զեկուցողը նշում է, որ համախառն և զուտ արտադրանքը պետք է հաշվել արժեքի մեծությամբ համապատասխանող զենքով: Նա հաշվարկներով ցույց է տալիս, որ ՍՍՌԿՎ-ի մեթոդով գյուղատնտեսության համախառն և զուտ արտադրանքը որոշելու ժամանակ զգալիորեն փոքրացվում է նրանց մեծությունը:

Հասարակական արդյունքի և ազգային եկամտի հաշվարկման մի քանի հարցերին էր նվիրված Ա. Ա. Էլագյանի զեկուցումը (Հայկական ՍՍՌ Պետպլան): Խոսելով զնագոյացման սխառմի թերությունների մասին՝ նա քննադատում է ՍՍՌԿՎ Պետպլանի և ԿՎՎ-ի ազգային եկամտի մեծությունը միութենական ռեսպուբլիկաներում որոշելու մեթոդները: Միասնական մեթոդ չկա նաև արդյունաբերության մի շարք ճյուղերում համախառն և զուտ արտադրանքը որոշելու գործում: Պետպլանը արտադրության մի շարք ճյուղերում այն հաշվելու ժամանակ անտեսում է ներքին շրջանառությունը, իսկ ԿՎՎ-ն այն մտցնում է համախառն և զուտ արտադրանքի մեջ: Զեկուցողը գտնում է, որ շինարարության համախառն արտադրանքի մեջ չպետք է մտցնել մոնտաժվող սարքավորումների արժեքը: Միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի հաշվարկման ժամանակ օգտագործվում են մի շարք միութենական միջին գործակիցներ, որոնք պիտանի չեն առանձին ռեսպուբլիկաների համար: Համապատասխան գործակիցների որոշման համար կարևոր է ՍՍՌԿՎ Պետպլանի և ԿՎՎ-ի կողմից միասնական մեթոդի մշակումը:

ՍՍՌՄ Ֆինանսների մինիստրության ՖԳՀԻ ավագ գիտական աշխատող Վ. Ն. Ժուկովի ղեկուցումը նվիրված էր միութենական ռեսպուբլիկաներում շրջանառության հարկի դոյացման և օգտագործման հարցերին:

Շրջանառության հարկի ձևով իրացվում է պետական արտադրական ձեռնարկությունների կուտակումների մոտ կեսը: Շրջանառության հարկի զգալի մասն իրացվում է արտադրության այն ճյուղերում, որտեղ նա չի ստեղծվում: Այժմ շրջանառության հարկի մոտ 80 տոկոսն իրացվում է թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի գների միջոցով: Վ. Ն. Ժուկովն այն կարծիքն է հայտնում, որ շրջանառության հարկն ըստ իրացման վայրի ազդային եկամտի մեջ հաշվարկելիս ավելի նպատակահարմար է, քան ըստ արտադրման տեղի հաշվարկելը: Այնուհետև ղեկուցողը կանգ է առնում շրջանառության հարկի և պետական բյուջեի փոխհարաբերությունների հարցի վրա: Յուրյն է տալիս, որ պետական բյուջեում գնալով մեծանում է շահույթների դերը, իսկ շրջանառության հարկն ավելի կարևորություն է ստանում՝ հասարակական ոչ արտադրական կարիքների նպատակով օգտագործելու համար, սոցիալ-կուլտուրական ծախսերի, կոլեկտիվ սպառման համար և այլն:

Շրջանառության հարկի դոյացման և օգտագործման հարցերը Հայկական ՍՍՌ-ում ղեկուցման մեջ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Ա. Պետրոսյանը նշում է, որ միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամուտը հաշվարկելու ՍՍՌՄ Պետպլանի և ԿՎՎ-ի մեթոդիկաները արհեստականորեն մեծացնում կամ փոքրացնում են ազգային եկամտի մեծությունը: Դա կախված է նաև այդ ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքից: Զեկուցողն առաջարկում է հաշվել ՍՍՌՄ ազգային եկամտի մեծ ռեսպուբլիկայի ազգային եկամտի մեծությունը (առանց շրջանառության հարկի) և ըստ այնմ էլ որոշել միութենական ռեսպուբլիկայի շրջանառության հարկի բաժինը: Վ. Ա. Պետրոսյանի կարծիքով այդ դեպքում յուրաքանչյուր ռեսպուբլիկայի շրջանառության հարկի մեծությունը ուղղակիորեն կախման մեջ կգրվի նրա էկոնոմիկայի զարգացումից: Այդ մեթոդը կիրառելի է համարում նաև շրջանառության հարկի ճյուղային կառուցվածքը հաշվարկելիս:

Կոնֆերանսում ազգային եկամտի և ժողովրդական սպառման հարցերի վերաբերյալ ղեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա. Խ. Կաբալյանը, իսկ Հայկական ՍՍՌ-ում սպառման հասարակական ֆոնդերի դոյացման և օգտագործման մասին՝ նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող Գ. Ն. Սահակյանը:

Գիտական կոնֆերանսում կարդացված ղեկուցումները մեծ հետաքրքրություն առաջացրին մասնակիցների մեջ և ծավալվեց մտքերի լայն փոխանակություն:

Լ. Գ. Մալին (Մոսկվայի Պլեխանովի անվան ինստիտուտ) իր ելույթում խոսելով ազգային եկամտի բաշխման հարցի մասին, առարկեց այն տնտեսագետներին, որոնք կարծում են, թե ռեսպուբլիկաներում ևս սկզբնական և վերջնական եկամուտները միմյանց հավասար են: Նա առաջարկեց արտադրության ստադիայում ազգային եկամուտը ղեկավարել արժեքի մոտ գնելով, բաշխման ստադիայում՝ իրացման գներով, վերջնական ստադիայում՝ նյութական բարիքներով: Ընդհանուր փաստացի գներով: Խոսելով բնակչության ծառայությունների չափի մեծացման կարևորության մասին՝ նշեց, որ չի կարելի բնակչության եկամտի մեջ մտցնել սպասարկումների արժեքը և դրանով բնակչության եկամուտների ծավալը արհեստականորեն մեծացնել:

Ա. Գ. Զվեռեր (ՍՍՌՄ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտ) իր ելույթը նվիրեց ժողովրդական տնտեսության բաղադրողների և հատկապես ազգային եկամտի բաղադրող հարցերին: Նշեց, որ մարդատար տրանսպորտում և կապի բնագավառում ազգային եկամուտ չի ստեղծվում, ու բնակչության ծառայությունները վերաբաշխված ազգային եկամտի մի մասն են և նրանք ազգային եկամտի ծավալը չեն կարող մեծացնել: Առաջարկում է փոխել շրջանառության հարկի անունը: Ա. Գ. Զվեռեր խոսեց նաև գների ու գնադոյացման հարցերի մասին և ցույց տվեց, որ միութենական ռեսպուբլիկաների միջև ազգային եկամտի վերաբաշխում միշտ էլ լինելու է:

Մ. Ա. Երմոլինսկին (Ուկր. ՍՍՌ Պետպլան) անհրաժեշտ համարեց, որ միութենական ռեսպուբլիկաների ազգային եկամտի մեծությունների դումարը հավասար լինի միութենական բնական ծախսին: Նա իր ելույթում կանգ առավ ազգային եկամտի հաշվարկման միասնական մեթոդի անհրաժեշտության վրա: Նշեց, որ ինքը չի կարող համաձայնվել Վ. Ն. Ժուկովի այն տեսակետին, որ շրջանառության հարկն ըստ իրացման վայրի հաշվարկելն ավելի ճիշտ է: Մ. Ա. Երմոլինսկին առաջարկեց Միության բուհերում բարձրորակ մասնագետներ պատրաստել ժողովրդական տնտեսության բաղադրողների մասնագիտության դոկ:

Կ. Ն. Պապադուկ (Տաշքենդի Ֆինանսա-տնտեսագիտական ինստիտուտ) իր ելույթում կանգ առավ ազգային եկամտի արտադրության հարցերի վրա և նշեց գնադոյացման հարցերի

կարգավորման նշանակությունը, նույն հարցերի մասին խոսեց նաև Ա. Արզուղանիեր (Ուղբեկական ՍՍԽ), որը միաժամանակ առարկեց Ռ. Դ. Ֆեդոտովային և Օ. Ն. Պաշկևիչին՝ միութենական ուսուցիչականներում կապիտալ ներդրումների ծավալը արտադրված ազդային եկամտի ծավալի հետ կապելու համար:

Ե. Ն. Ֆրեյմունդը (Մոսկվայի Տնտեսագիտական-Վիճակագրական ինստիտուտ) և ՍՄԿՊ Կենտկոմի կից հասարակական գիտությունների ակադեմիայի ասպիրանտ Վ. Պ. Ալեքսանդրովը իրենց ելույթների մեծ մասը նվիրեցին բնակչության ռեալ եկամուտների և սպառման ֆոնդերի հարաբերակցության հարցերին: Վ. Պ. Ալեքսանդրովի տեսակետն այն մասին, որ բնակչության ռադիկալություններն ավելացնում են սպառման ֆոնդերը՝ քննադատվեց ելույթ ունեցողների մեծ մասի կողմից:

Ելույթ ունեցողներ Վ. Կ. Կուրը (Սոցիալիստական-Վարկային-տնտեսագիտական ինստիտուտ), Ա. Հովհաննիսյանը (Հայկական ՍՍԽ Ժողտնտխորհ), Ե. Ն. Ֆրեյմունդը (Մոսկվայի Տնտեսագիտական-Վիճակագրական ինստիտուտ) Ռ. Դ. Ֆեդոտովան (Մոլդավական ՍՍԽ Տնտեսագիտության ինստիտուտ), Հ. Ալեքսանդրովը, Մ. Հ. Արզուղանը (Հայկական ՍՍԽ Տնտեսագիտության ինստիտուտ), Ինչպես նաև ընկ. ընկ. Բիլենցար (Հիտվական ՍՍԽ Տնտեսագիտության ինստիտուտ), Պոմանը (Հատուկական ՍՍԽ Պետպլան), Խվեբիսին (ՍՍԽՄ ԿՎՎ), Դանիելյանը (Հայկական ԱՍԽ Գյուղատնտեսության միտիստությունների Գիտա-հետազոտական ինստիտուտ) կանգ առան աղյուսի եկամտի արտադրության, բաշխման ու օգտագործման, մեթոդական և պրակտիկ նշանակություն ունեցող մի շարք հարցերի վրա և կոնկրետ առաջարկություններ արեցին միութենական ուսուցիչականներում ազդային եկամտի հաշվարկման, զննարկման սխեմայի կարգավորման մասին:

Կոնֆերանսի աշխատանքներն ամփոփեց Հայկական ՍՍԽ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր Ա. Ա. Առաքելյանը:

Գիտական կոնֆերանսն անցավ տեսական բարձր մակարդակով և հսկայական հետաքրքրություն առաջացրեց քննարկվող հարցերի նկատմամբ:

Վերջում գիտական կոնֆերանսն ընդունեց հանձնարարականներ, միութենական ուսուցիչականներում ազդային եկամտի բալանսի հարցերի վերաբերյալ:

Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայ լեզվաբանության մեջ բազմիցս նշվել է հայոց լեզվի շատ իրողություններ փորձառական լեզվաբանության (մասնավորապես փորձառական հնչյունաբանության) հայեցակետով վերլուծելու անհրաժեշտությունը:

Վերջին տասնամյակում փորձառական լեզվաբանությունը հսկայական քայլերով առաջ է անցել: Դրան մեծապես օգնել են մեզ մոտ և արտասահմանում մեքենայական թարգմանությունների, կիրքերնետիկայի և, ընդհանրապես, մաթեմատիկական լեզվաբանության քննադատում ծավալվող աշխատանքները:

* * *

Սկսելով իր պատմությունը անցյալ դարի 90-ական թվականներից, հայ փորձառական լեզվաբանությունը, սակայն, զարգացման պարբերական ընթացք չի ունեցել: Ակադ. Ահառյանի հայ լեզվաբանության համար մեծ արժեք ներկայացնող «Դրաբարի պայթական բազմայինները ժամանակակից բարբառներում» հետազոտությունը, որ հրատարակվել է Փարիզում, 1899 թ. ֆրանսերեն լեզվով, չի ունեցել իր հաջորդները: Այդ չի նշանակում, թե հայոց լեզվի հնչյունական կազմի փորձառական ուսումնասիրությունը որպես հայեցակետ մերժվել է: Ժամանակ առ ժամանակ այդ հարցերին անդրադարձել է պրոֆ. Գ. Սևակը և մի քանի անգամ հազորդումներ է արել իր կատարած աշխատանքների մասին: 1940 թ. ֆիդիկոս Գ. Ս. Հովհաննիսյանի կողմից ձեռնարկվել է որպես դիսերտացիայի թեմա՝ հայոց և ուսուց լեզուների ձայնավորների էլեկտրաակուստիկական հետազոտությունը՝ ֆիզիկական հայեցակետով: Այնուհետև ետից մի երկար ընդմիջումից հետո՝ 1958 թ. պաշտպանվել է թեկնածուական դիսերտացիա Ա. Մ. Արամյանի կողմից «Экспериментально-фонетическое исследование и классификация гласных фонем современного армянского языка» թեմայով, այս անգամ արդեն ֆիզիոլոգիական հայեցակետով: